

ՀՆԱԽՈՍԽԱԿՈՅՆ

ԿՈՒՍԱՍԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷջ

— ○ —

Որբան կարեոր է ինդիրս հայ կրօնապատմական տեսակիտով, նոյնքան անխնամք թողուած է ցարք մեր պատմափառաց կողմանէ: Միայն Հ. ինձիքան ծանօթ է ինձ գրադած անով, և այն ալ հարկանցի կերպով: Հ. Ալշան իւր գործոց մէջ ցիրուցան յիշատակութիւններ միայն ունի: իսկ է. կոստանէանց իւր համառօտ աշխատութեան՝ մէջ բոլորովին անտեսեց զայն: Մեր պատմութեան այս բացն է, — արդիւնք մեծաւ մասամբ աղբերաց սակաւութեան ու միութեան, — զոր պիտի փորձեմ լցնել ներկայ քննութեամբ:

1. — Քրիստոնէական կուսակրօնութեան գաղափարը, արանց և կանանց համար միանգամայն, կը սկսի Աւետարանին հետ: Անոր առաջին գովեստը հիւսեց նոյն ինքն Եկեղեցւոյ աստուածային Հիմմաղերը¹, զոր Կրկնեցին իւր աշակերտները, և մասնաւորապէս Պաւոս առաքեալլ²: Այս խօսելով «Կուսանաց» մասին, որ ներկայ ուսումնամիրութեան նիւթը կը կազմեն, կը քաջալերէ զանոնք, իրատելով «հաւատարիմ լինել» իրենց վիճակին, համարելով թէ «այնաէս լաւ իցէ», և լաւութեան պատմաներն ալ կը թուէէ: Յովհաննէս արքայութեան մէջ աւելի փառաւորեալ տեսաւ զանոնք³. և Փիլիպպոս սարկաւագի չորս զստերըն էին և կոյսը մարգարէք⁴, կուսութեամբ մարգարէական շնորհին արժանացած:

Այդ ժամանակի կուսանը հաւաքական կեանց չունին, այլ իւրաքանչիւրն իւր հայրենի տան մէջ կը բնակի⁵: Բայց ունին

որոշ վիճակ մը, զոր առաքեալը կը սահմանէ «հաւատը» բառով: Խօսելով կամւոր այրիտութեան մասին, որ կուսութեան նախակից վիճակ մ'էր, կը յանդիմանէ թեթեւարարոյ այրիները, որ «գտաշին հաւատսն արհամարհեցին»⁶: Միանագամայն կը գծէ մեզ «ստոյդ այրեաց» կենցաղավարութեան եղանակը: «մենացեալ յուսացեալ յիստուած, և կանիսեալ յաղօթս և ի ինդրուածս զցայդ և զցերեկ»¹⁰, ուսկից չէր զանազաններ կուսանին կեանցն ալ՝ որ «Հոգայ զցեառն, զի իցէ սուրբ մարմնով և հոգաւոյ»: և որ ընտրած էր զայն՝ «վասն պարկեցուութեան և հպատակութեան Ցեառն՝ առանց գրադանաց»¹¹:

Յետ առաքելոց կը շարունակուի նոյն վիճակը մի և նոյն ձևով: Ա. Կղեմէս, աշակերտ և յաջորդ Պետրոսի, իւր ձեռօց տուալ Փլավա Դոմիտրլայի՝ կուսական ցողը¹², Ա. Յուստինոս 138 թուին կը յիշէ «մեծ քաղաքութիւն մ'անձանց երկու սեռէ», 60–70 տարեկան, որոնց «ի մանկութենէ» նուիրուած էին ու «կը յարաւեեն ողջախոնութեան մէջ»¹³: Նոյնը կը հաստատեն Աթենազոր 176 թուականին¹⁴, Ա. Կիպրիանոս Գ գարու կիսուն¹⁵, և ուրիշներ¹⁶: Ըստ վերջնոյդ՝ անոնց ուխտն անցակտելի էր. և չունենալով տակաւին յատուկ մենաստան՝ կը շարունակէին ըշնակել իրենց հայրենի տան մէջ, հեռի արանց ակնարկէն ու խօսակցութենէն: Եթէ բաւական ոտքիկ չունենային՝ եկեղեցին կը նպաստէր հաւատացելոց նուէրներով¹⁷:

Եկեղեցին երբ Գ գարուն ստացաւ իւր խաղաղութիւնը, կուսանց թիւն ալ ընդարձակցաւ: Ասկերեանի օրով, որ է զէպ ի վերջերը նոյն դարուն, կրնար նա վկայել՝ թէ «բազում են կուսանց բան

1. Հնախոս. Գ, 214–7. — 2. Հայոց վանեկը, 1886. — 3. Մաք. իթ, 20. ԺԹ, 11–12. Ղ. ի, 34. — 4. Ա. Կոր. ի, 1–9. — 5. Անդ. 25–38. — 6. Յայտ. ԺԹ, 4. — 7. Գործք Առ. իթ, 9. — 8. Ա. Կոր. ի, 37. — 9. Ա. Տեղ. ի, 12. — 10. Ա. Տեղ. ի, 5. —

11. Ա. Կոր. ի, 34–5. — 12. Ռուն. Վայ. մայ. 7. — 13. Ջատաց. Ա, 15. — 14. Գենա. Աւ. բրիտ. ԼԳ. — 15. Վասն զցեստ. Կուս. Գ. — 16. Հման. իւր քան. ի Բիւզանդին, ի 16 Հոկտ. 1906. — 17. Martigny, Diction. 795.

զառնականայս, ո՞րչափ յաճախեաց կուսութիւն քան զամուսնութիւն¹։ Նոյն հայրապետը կը նկարագրէ անոնց խօստամբեր կենցաղավարութիւնն ալ², որ իրեն ու մեր զարմանքը կը շարժէ խաղողութիւնը կը նպաստէ անոնց նաեւ միասին հաւաքուելու և միաբանական կեանք վարելու, որով կը սկսի կուսաստանաց գոյութիւնը կրօնաւորաց հաւաքական բնակութեան հիմադիր Ա. Անտոն անապատականը կը թուի նաև կուսանոցաց առաջին հեղինակը, Դ զարու առաջին քառորդին Եզիպոտոսի մէջ արջարև կուսանաց վանք մը կը հաստատէ նա, անոր զլոտի կարգելով իւր Բոյը, Կըսէ Ա. Աթանաս³: Նոյն ըրաւ Պաղեստինի մէջ նաև Ա. Պախուէկոս՝ նոյն զարու երկրորդ քառորդին երկու կուսանոցներ հաստատելով: Ա. Բարսեղ ալ նոյն զարու երրորդ քառորդին վերջերը կառոյց բազմաթիւ կուսաստաններ Պոնտոսի և Կտիագովկիոյ մէջ: Նաև Արեմուտք Դ զարէն հետեւցաւ արքելեաց օրինակին, և բազմացուց կուսանաց մենաստանները⁴:

2. — Անցնելով ի Հայաստան, կուսաստանաց գոյութեան ննազոյն շրջանին ի Վկայութիւն՝ ունինք Խորենացւոյն վերաբրուտած առ Սահակ արծրունի նամակին տեղեկութիւնը, թէ Բարթողիմէոս առաքեալը Հոգհաց վանուց մէջ կը հիմնէ հեղեղցի մը, հանգստարան Աստուածածնի պատկերին, և «տայ զնա սուրբ կանանց», որոց զլուի կը կարգէ երեք կուսաններ, և «զայլ կանայսն ընդ ձեռամ նոցա կացուցանէ», շինելով խրճիթներ անոնց բնակութեան համար: Հարկ չկայ յոզնելու հաստատելու համար այս տեղեկութեան անշարմարութիւնը առաքելական շրջանին, և անմիաբանութիւնը մեր տեսած ընդհանուր և ստոյք պատմութեան հետ: Յետնագոյն սովորութեան վրայ հիմած է զայն պատմիչը:

Ապաժամութիւնն է Ազաթանգեղոսի ոսկեղարեան խմբազրչին զործն ալ, որ Գ զարու վերջերը Հոռվմայ մէջ կը զնէ «արգելավանս մի կուսանաց»⁵, որոյ զլուի է Գայիսանէ, և զանոնց կը փախցնէ ի Հայաստան՝ ազատելու համար զՀոփիմիմէ Դիոկղետիանոսի ճանկերէն: Ա. Հոփիմիմէ կրնար կուսան մը լինել, և իւր հաւատարիմ կրօնակիցներէն բերովիլ⁶ ու նահատակովիլ ի Հայս: Բայց այդ պահուն կուսաստանը դեռ անձանօթ են:

Յառաջ կու զանք, և Լուսաւորչի օրով, որ է Դ զարու առաջին քառորդին, տակաւին որ և է հետք չկայ մեր երկրին մէջ, թող թէ կանանց, այլ արանց կանոնաւոր վանքերու անգամ: Ինք՝ Հայ Եկեղեցւոյ հիմնադիրը՝ «բազում և անհամար զունդս զունդս վանականաց ի շինս և յանշէնս, զաշտականս շինակեացս և լեառնակեացս, անձաւամուու և արգելականս հաստատէր», Կ'ըսէ Ազաթանգեղոս⁷: Ատոյց են վիպահան պատմագրիս խօսքերը. Կրնանց համոզուիլ՝ թէ Լուսաւորիչ կըցաւ հետեւի Եղիպատոսի իրեն զեռ ժամանակից ու հետարնակ անսպատականին օրինակին, և հաստատեց կրօնաւորաց համամիմրութիւններ, «գունդս զունդս զ», կամ մենանոցներ, ինչպէս յետոյ կը յարէ՝ թէ նոյն հայրապետն առնելով աշակերտներ «յիւրաքանչիւր մենաստանց», Կ'ելնէ ճնշելու լերանց վըրայ⁸, թէ ընդհականակն նոյն պատմութեան և զարու խմբազրչը կը նկատէ ու կը նկարագրէ զԱ. Գրիգոր իւր ժամանակի գաղափարով, ինչ որ աւելի հաւանական կը թուի ինձ:

Բայց յամենայն դէպս այդ շրջանին շատ աւելի դժուարին էր՝ որ արդէն կուսաստաններ լինէն: Ասոր ապացոյց կը նկատել այն պարագայն՝ որ Տրդատ արքայ իւր բրոջ Խոսրովիդիտոյ համար, — որ շատ անգամ Կ'երեի ու կը յիշուի

1. ՄԿ. թղթ. Ա, 817. — 2. ԱԿ. 815. — 3. Վարք Ա. Անո. ԺԹ. — 4. Martigny, 476. Cabrol, Dict. 8095-6. — 5. Խորեն. Մատեն. 294. — 6. Ա.

աբ. 113. — 7. ԿԿ. 156. — 8. ԿԿ. 629. — 9. ԿԿ. 631.

բարձրական կենաց և բարեպաշտիկ գործերու մէջ, իրեն «Օրիորդ» կամ «մեծ Օրիորդ»¹, բայց չի ամուսնանար, գուշակել տալով մեզ իւր ընտրած կուսական վիճակը, և խորենացին կոչուելով «կուսան համեստ»², — կը կառուցանէ Քառոնյա ամրոցին մէջ «տուն հովանոց, մահարձանօք, սցանչելի դրօշուածովք բարձր քանդակաւ»³, ուր օրիորդը միայնակ կը նուիրուի Աստուծոյ, չունենալով իրեն ուրիշ վիճակակիցներ՝ որոց հետ եթթար կամ զորս իւր ցով առնուր կենացութեան, ինչպէս կը հետեւ պատօնչին խօսցէն՝ թէ այն տունն «ի համար քեռ իւրոյ» էր, ոչ թէ ուրիշ կուսանաց ևս յատուկ,

Առաջին և հաւասարի յիշատակութեան կուսաստանաց՝ կը հանդիպինց Դի գարու կիսէն յետոյ, Ս. Ներսիսի օրով: Աս դաստիարակուած ի կեսարիա, և յոյն բարեկարգութեանց հմուտ և հետևող, զանազան գեղեցիկ նորոգութեանց հետ՝ զոր ըրաւ, «շինեաց, կ'ըսէ Փաւատոս, կուսաստան յամենայն զաւառս, զի որ միանգամ կուսանը և հաւատացեալը»⁴ իցն՝ անդոր ժողովսցին»: Եթէ «շինեաց», ուրեմն փաստ մ'աւելի ունինք՝ թէ իւրմէշ յառաջ չկային, մինչդեռ նոյն ինքն կը զգացնէ՝ թէ ազատ կուսաններ կը գտնուէին: «զի որ միանգամ կուսանը... իցն»: Սակայն այդ առաջին մենաստանց զժրախտարար երկար չտեսեցին, և փոթորկի հանդիպեցան: Անկարգ թագաւորք Փապ՝ շնանդուրժելով անշատո հայրապետին կշտամբանաց, սպաննեց այսն. անոր բոլոր բարեկարգ և աշխարհաշէն գործերը քանդեց, կուսաստաններն ալ «աւերել» տուաւ, և կուսանըը նեթանոսարար խայտառակութեան մատնեց⁵:

Ս. Ներսիսի յաջորդները, — գուցէ նոյն ինքն Սահակ, ժառանգ անոր արեան, հոգուոյն ու բարձր դաստիարակութեան, և ինքն իսկ հիմնադիր ու հաղորդ վանական

հաստատութեան մը հայրապետանոցին մէջ⁶, — կը յաջողին վերսարին հաստատել զանոնց: Այնպէս որ Ե զարու կիսուն անցոմէ կան դարձեալ ու բաւական թուով: Այդ պահուն իսկ Պարսիկներն ուզելով չնջել քրիստոնէութիւնը Հայաստանէն, բաց յայլոց կը պահանջէին՝ որ «Հաւատացեալըն ի իրիսոսո արք և կանայք, որ ընակեալ են յիւրաքանչիւր մենանոց»: յրուին և աշխարհականանան՝ Աւրեմն այդ կուսանոցը, որ արդէն բարզաւան են Վարդանանց օրով, վաղուց հաստատուած լինելու են, ինչպէս ըսի: Եթէ Վարդանանց բարեպաշտութիւնը չվիշտ Պարսից, բայց Հայոց պարտութիւնը և թշնամեաց կողմանէ աշխարհին աւերն ինքնին ջնջած լինելու են կուսանոցները:

Սակայն մամիկոնեան վահանայ մարզպանութեան պարզեած խաղաղութեան ժամանակամիջոցին՝ կուսանը վերսարին երեան կու զան. և այնքան յառաջ կ'երթան, որ անոնցմէ ոմանք իրենց կենցաղավարութեան եղանակովն իրենց վրայ կը հրաւիրեն թէ: Մանզակունույն պարները, որ այսպէս կ'ըսէ անոնց մասին: «Ոմանք ի կուսանաց, որք քրիստոսի կամեցան հանոյ լինել հանդիքիւր և կերպարանօք (միայն), որ է չարաչար շընութիւն»⁷: Նոյնպէս կը տրոնջէր նաեւ Ըսկերեան թիւրանդիոնի կուսանաց դէմ:

3. — Եւս հաստատելու կուսաստանաց գոյութիւնը մեր ցով Դի՝ Ե զարերուն, որ ամենէն կարենը շրջանն է, պէտք է հոս կանգ առնունը պահ մը քանի մը հարցերու վրայ, որ կը վերաբերին անոնց էութեան:

ա. Եւ նախ՝ թէ ինչ ձեւ կամ յօրինուած ունէին այդ կուսանց¹⁰ կամ կուսաստանը կամ մենանոցը¹¹: Ս. Անոնի հաստատած մենաստանը ուրիշ բան չէին, բայց իւրմիթներ՝ զետեղուած իրարու մօտ, որոնց բնակիչը միարանական

1. Ադթ. 600, 614, 620. — 2. Խորեն. Բ. թթ. — 3. Նոյն՝ Բ. գ. — 4. Իմա հաւատառոր. — 5. Փաւան. Ա. լաւ. — 6. Խորեն. Գ. թթ. — 7. Եղիշէ. Վ. հետեւ.

1898, Է 94: — 8. Մանդ. 161: — 9. Մեկ. թթ. Ա. լ. 68-71. — 10. Ասկեր. Անկ. Մաթ. Գ. էջ. — 11. Ասմաւ.

կեանք կը վարէին։ Ա. Պախոմէոս այդ նը կը կոչէ «արգելավանս մի կուսանաց՝ միանձնական լեառնական¹⁰»։ Արդեօք այդ հեղինակները, որ միշտ խրճիթ մասին կը խօսին, իբենց որով ալ դեռ տիրող սովորութիւնն ազդուած են, թէ նախընթացին ծանօթութիւնն ունէին, և Եղարուն կուսանց ալ արեգայից պէս հանգիստ վանցեր ունէին արդէն։ Դժուարին է պատասխանել առ այժմ, չունենալով որ և է կոռւան։

Բ. Մեծին ներսիփ կուսաստանաց կենաց ծրագիրն է՝ «ի պահս և յաղթս» անցնել¹¹։ Կուսանաց պահեցողութեան յատուկ սնունդն են ընդելինն, ինչպէս Արգաթանգեղոս կ'ըսէ Հորիսիմանց համար։ «ընդակերս, զգաստացեալս, պարկեշտականս»։ Իսկ աղօթից նկատմամբ կը զերկանաց յերկրաւոր ափուտից¹²։ Գալով կուսաստանաց, անոնք ալ ի սկզբան, այսինքն Թղարուն և զեռ յետոյ ևս՝ խրճիթներէ կը կազմուին։ Զայս կը հաստաէ Հոգեաց վանուց վերոյիշեալ աւանդութիւնը՝ թէ Բարթողիմէոս և շինէ խրժիրս վանիցն», ուր կը բնակեցնէ կուսանները¹³։ Խորենացին զշափիսիմեանս դեռ ի Հայս չհասած, կը հաստատէ ժամանակ մը կորդուաց թմբիս գիւղին մէջ, ուր «խրժիրս շինեալ բնակեցան», կ'ըսէ։ Իսկ Հայաստանի մէջ հասնելով, «փոքրազոյն խրժիրս շինեալ»։ Կը բընակին ի Տոսրւ, թեսոյ Ազաթանգեղոս անոնց կայան կը նշանակէ Վաղարշապատու մօտ՝ «ի հնանահայրիս այգեստանւոյն»։ Որ է հնանակի վրայ շինուած «յարկ» կամ ծածկոյթ, այս ինքն զարձեալ տեսակ մը խրճիթ։ Ասոնց նկարագիրը կը լրացնէ Փաւառու, զրելով թէ մեծն ներսէս հաստատած կուսանցները պահումեանց պէս կ'ապահովցնէր «պարսպեալս և ամրացեալս», որպէս զի անոնց մարզ չմօտենար։ «վասն աւանդոցն զգուշութեան»։ Այս պատճառու ալ Ազաթանգեղոս Հորիսիմեանց ի Հռովմէ կարծեցեալ մենաստա-

1. Cabrol, II, 8093-4. — 2. Առյն 8095. — 3. Առյն 8158, 8159 և. — 4. Եղիշ. 401. — 5. Խոր. Մատն. 295. — 6. Առյն 301. — 7. Առյն.

302. — 8. Արտ. 123. — 9. Փաւս. Ե, լաւ. — 10. Արտ. 113. — 11. Փաւս. Ե, լաւ. — 12. Արտ. 113. — 13. Արտ. Կոթ. Ա, 815.

բաց ունել զգուռն ողորմութեան ի պէտս կարօտելոց», և այլն¹:

Ք. Ինչպէս կը հայթհայթէին իրենց անունը: Երեք տեսակ եկամուտներ ունեին անոնց: Առաջինն էր «յաշխարհէ»². այս ինքն նպաստներէն՝ զոր բարեպաշտ անձինք կու տային, և մեծն Ներսէս իւր օրով կը յատկացնէր անոնց: Երկրորդն էր «յիւրաքանչիւր ընտանեաց»³, զոր կը ստանար ամէն կուսան, մանաւանդ անոնց որ ընչեղ ծնողաց զաւակներ էին: Եւ երրորդը ձեռագործներէ՝ զոր անոցմէ ճարտարները զիտէին պատրաստել ու կը վաճառէին. այսպէս Հոփիսիմեանց մին կը շինէր «ուլունս ապակեղինս», որոյ զնէն կը հանսէր, կ'ըսէ աւանդութիւնը, իւր և ընկերաց ոոճիկը⁴: Եւ որովհետ կուսանաց մէջ ձեռագործի յարմար անձինք բաւական թիւ մը կը կազմէին միշտ, կարող էին աղբատաց ալ նպաստել, ինչպէս ըստ Յաճախապատմը:

Դ. Ոչ միայն կենցաղավարութեամբ, այլ զգեստով ալ կը տարբերէին անոնց աշխարհէկ կիներէ: Ասոր համար մոլեռունդ Պարսիկները Վարդանանց օրով կը պահանջէին՝ որ մեր միանձունց ու կուսանց «փոխեսցին զհանդերձս իւրեանց ըստ աշխարհական կարգաց»⁵: Եթոյ երբ Պարսիկ մոգերն ու փուշտիպանների Հայաստան կը հասնին՝ անոնց կանայք կը յանդունին «պատառել զհանդերձս հաւատաւոր կանանց»⁶: Շուշան, զուսար մեծին Վարդանայ, լըուելով ու զատուելով ուրացող ամուսնէն, «կրօնաւորական զգեստիւ կարգաւորութեամբ հանդիսանայր»⁷: Եւ Մանդակունին յիշեց կուսանաց որոշումն աշխարհականներէ նաեւ «հանդերձիւր»⁸: Այդ հանդերձին որակը բացատրուած կը տեսնենք աւելի յետնազյն վկայութեանց մէջ, զոր պիտի յիշեմ: Խսկ ձերն նկարա-

գիրը կը վերապահեմ հայ տարագուց պատմութեան:

Ե. Միայն առանձնութիւնն ու զգեստը չեն որ զաննեց հաւատաւոր կ'ընեն. այլ ուխտ մ'ալ կը կատարէին՝ նոյն վիճակն ընդգրկելու պահուն, որոյ նիւթն էր ողջախոնութիւնը, ինչպէս կը հաստատեն Ուրիշնէն և Կիպրիանս, որոցմէ վիրջինս կը նշանակէ նաեւ պատիժներ՝ որ կը տրուէին ուխտազանցից: Նոյնը կը հաստատէ Ելուիրայի ժողովն ալ իրը 300 թուականին⁹: Նոյնպէս էր նաև մեր քով. Հոփիսիմեանց իրենց պարկեշտութեան սպառնացող վտանգին առջև կը դողային, «յիշեալ զուխտն սրբուրեան... յոր մտեալ էին»¹⁰. և ողբալով կ'աղոթէին առ Աստուած, որպէս զի «մի շիջցին ճրագունը հաւատոյ ուխտի սրբուրեան մերում»¹¹, որոյ նիւթ կը կազմէ նայնպէս ողջախոնութիւնը. որոյ համար կը խնդրէին՝ «ըգկուսարեան մարգարիտ հաւատոց մերոց» չմատնել հեթանոսաց ձեռքը¹². որովհետեւ, կ'ըսէին, «նմա (Քրիստոսի) եռիրեցաք զիւսուրիինս մեր»¹³: Յաճախապատումը կը հաստատէ ուխտին անխզելութիւնը, վկայելով վանականաց մասին՝ «մարմուզ և արեամբ գաշնաւորեալը ի միաբանութիւն բառ ուխտի և հրաժարման յաշխարհէս»: և մեկնողները նմանեցնելով յիմար կուսանաց, որոց առջև փակ պիտի մնայ երկնային առազամատը¹⁴: Ինչ որ կ'ըսէ հեղինակս արելայից մասին, պիտի իմանանց նաև անոնց վիճակակից կուսանաց համար:

Գ. Ուշագրաւ է անոնց միաբանական կազմն ալ: Անոցմէ մին աւագագոյն է այլոց վրայ, և սովորաբար զիկաւոր կը կոչուի օտարներէն¹⁵: ուր կուսանց զայն կ'անուանեն «մայրէ մեր և զրոխ»¹⁶, ինչ որ խորենացին ալ կը կրկնէ անոնց պէս՝

1. Տպ. Վահեա. 108-9. — 2. Փաւա. Ե. 117. — 12. Դայն 119. — 13. Կոյն 138. — 3. Անդ. — 4. Ազաթ. 128. — 5. Եղի. 94. Ըստ Ա. Ա. Առաքելութեան 210, 213. — 15. Ազաթ. 113. — 16. Կոյն 118. — 7. Սոփեր, թ. 31. — 8. Առաքելութեան 211.

— 9. Cabrol, II, 3082. — 10. Ազաթ. 116.

« Ամայր կուսից վանականաց » կամ զրոխ ի կամ տեսչ՝ և Խոկ կուսանը իրարու քոյր մակրիը կու տան², ինչպէս արց ալ եղբայր կը կոչուէին. « Եղբայր զեղբայր յորդորելով » և այլ³:

Խոկ ընդհանուրին սովորական կոչումն է կուսանք, գործածուած շատերէն⁴, և թիչ անգամ կոյս⁵. ինչպէս և հաւատաւորք⁶, կամ հաւատացեալը⁷, ծագած առարգելական բացատրութենէն՝ որ հաւատք բառով կը սահմանէ նոյն վիճակը⁸, և զոր կը կրկնէ Ազաթանգեղոս ևս⁹: Փաւասոս կը զատէ իրարմէ « կուսանք և հաւատացեալք »¹⁰, առաջնովն իմանալով անոնց աղջկութեան հանգամանքը կրօնաւորութեան հետ, և երկրորդով՝ նոյն կեանըն ընտրող ոչ կուսանքը. և յետոյ երկու կոչումները հոմանշաբար կը զուգէ մի և նոյն անձանց վրայ. « զիւսանեն հաւատացեալք »¹¹:

Կուսաստանաց մօտ անպակաս են քահանայք, անոնց հոգեոր պիտոյից համար: Այսպէս ըստ նկարագրին Խորհնացոյն, Հոփիսիմեանց քով՝ երբ ի Վարագ էին՝ կը բնակին երկու քահանայք, որոնց ուրբաթէ ուրբաթ կը մաստուցանէին պատարագը և կը հաղորդէին կուսանքը¹²:

Ե. Քահանայք կը բնակին կուսաստանին մօտ, բայց ոչ մէջը որովհետք կուսանոցաց գյուղենէն ի վեր կայ ֆակարանի դրութիւնը. այս ինըն արգելքը կուսանաց զորս ելնելուն և կամ օտարաց, մանաւանդ արանց՝ ներս մտնելուն: Այս կանոնը հաստատուած էր պայմաննան կուսաստանաց մէջ¹³: Քահանայն միայն կը մտնէր հոգեոր պաշտամանց համար: Թէկ բացառութիւններ ալ կը լինէին երբեմ սրբութեամբ հոչակեալ վանականաց¹⁴.

Ինչպէս կը պատմուի Դանիէլ ճգնաւորի համար, որ անզամ մը կը զիշերէ կուսանոցի մը մէջ, ուր « ոչ երբեց մտեալ էր այր »¹⁵, Նոյնպէս էր նաև մեր ըով. Ազաթանգեղոսի արգելավանք¹⁶ բարին մէջ կը խոտանյ փակարանի գաղափարն իսկ. և նոյնը կը հաստատեն նաև հետագայ օրինակներ՝ զոր պիտի տեսնենց իրենց կարգին:

(Շարունակելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

Գ Բ Ա Կ Ա Ն

ՀՈՍԵՐՈՍ

Ո Դ Ի Ս Ա Կ Ա Ն

Բ. ԵՐԿ

Թ Թ Թ

(Շար. տես թզմ. 1922. էջ 311)

Տէկեմաք այսպէս խօսեցաւ. Արամազդ Ահեղամունչը լերան բարձըր ծայրէն Ազրկեց երկու արծիւ, որ նաին եւ առաջ Սաւառնաթեւ հովին շունչին թըռան հետ, իրարու կիպ, եւ երբ հասան վըռան նիշդ բազմաժեխոր հրապարակին, գրծեցին Երրջանակներ՝ ստէպ թեւերնին ծեծելով. Եւ շանթելով իրենց նայուածքն անոնց վրայ կը զուժէին մահերն անոնց, եւ զլուխին Ու վիզերնին փոփոխակի ցատենով ցապուներով՝ թըռան սլացան գէպ ի աշ Անոնց քագրին ու տուներուն վըռայէն: Անոնք ի տես թըռչուններուն ապինցան, Եւ ամենուն սիրոտ անհանգիսա կը տրոփէր Թէ ինչ չափիք արդեօք իրենց կը սպաննար: Ակիթիրսէս ալշաղիկ ծերունին՝

Ճետ Մաստորնան, որ կը զույք իր ամէն Տարեկիցներն իբրև հըմուռ հաւահմայ Եւ ապազան նախապատմող, ուղելով Անոնց ըսրին՝ այսպէս խօսիլ քսկըսաւ. « Թէպակեցիք, մըտիք ըրէք խօսերուս, Մասկ սկի թող տարփածուք մանաւանդ, և ապա կը ապանի կը բացուի վիճ մը խօրունկ: »

2

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ Ա Կ Ա Ն

ՊԱՅԵԼԻԿՈՒ ԲԱՅԱԼՈՏԵԿԱ

» Ա ԽԱՆԱՀԱՆ

ՊԱՅԵԼԻԿՈՒ Ա Տ Ա Ր Ա Ր Ա

